ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՏԵՂԻՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Այս են տնօրինականաց սուրբ տեղիքն որ է յԵրուսաղէմ. զոր գրեցից սակաւս 'ի բազմացն, ես ծառայս Աստուծոյ Նիկողայոս եպիսկոպոս։

Նախ Սամուէլ մարգարէի գերեզմանն։ Եւ այլ յառաջ երթաս Արեմաթիա է, ուստի Յովսէփն էր, և անդ կայ եկեղեցի, և Յովսեփայ գերեզմանն։

Եւ յԵրուսաղեմայ եզերն՝ Գամաղիէլի և սուրբ Ստեփաննոսի գերեզման։

Եւ 'ի սուրբ Յակոբ՝ գլուխն կայ Յակոբայ որդւոյն Զեբեդեայ, եղբարն Յոհաննու։

Եւ երբ երթաս 'ի Յարութիւնն դուռն մի կալած կայ 'ի վերայ ճանապարհին, ուր Տէրն ասաց. Ո՛ղջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա. և այլն։

Եւ այլ յառաջ դուռն մի այլ կայ կալած, որ երեշխեւորեաց Աստուածածինն՝ Մարիամայ եգիպտացւոյն։

Եւ մօտ 'ի Յարութեան դուռն, ուր զփայտ խաչին էառ Տէրն 'ի Սիմոնէ Կիւրենացւոյն և ինքն եբարձ։

Եւ կայ ընդդէմ նորա սուրբ Կարապետն, և 'ի Յարութիւն երբ մտանես, նա է Գողգոթա և տեղի կառափելոյ՝ ուր զՏէրն խաչեցին։ Եւ վէմն որ յերկուս հերձաւ, և Ադամայ գերեզմանն 'ի ներքոյ։ Եւ տեղի պատելոյն Քրիստոսի, և սուրբ գերեզմանն. և կափարիչն, և ննարքն, և ուր եմուտ Պետրոս և Յովհաննէս։

Եւ ուր նստաւ հրեշտակն և աւետէր կանանցն։ Եւ պարտէզն։

Եւ տեղին ուր ետես Մագդաղենացին զՔրիստոս և գիտէր թէ պարտիզպան իցէ. և ասաց, Րաբունի։

Եւ տեղիք դստերն Պատրոնիկէ, զոր յարոյց սուրբ խաչն։

Եւ տեղին ուր զՏէրն երկաթեցին։

Եւ բանտն ուր զՏէրն եդին։ Եւ փշոյ պսակի տեղին։ Եւ սիւնն ուր զՏէրն կապեցին։ Եւ խաչգիւտն։

Եւ սուրբ Գրիգորի խորանն։

Եւ ել անդի 'ի սուրբ Մատրան։ Եւ ել անդի 'ի քաղաքն 'ի Տալիթայի տեղին, զոր յորոյց Տէրն 'ի մեռելոց։ Եւ տեառատեսին տեղն, զոր բժշկեաց Տէրն։ Սիմոնի բորոտին տունն, ուր պոռնիկ կինն զՏէր օծեաց։ Եւ քարն որ Տէրն 'ի վերայ ել և քարոզեաց, որ սպիտակացաւ։

Գրապատիկէ աւազանն, որ կոչի եբրայեցերէն սրահ, ուր անդամալոյծն բժշկեցաւ։

Եւ գերեզմանք Աստուածածնի ծնողացն, Յովակիմայ և Աննայի։ Եւ ծնունդըն Աստուածածնին։ Սուրբ Ստեփաննոսի քարկոծումն։ Աստուածածնին գերեզմանն, որ է Գեսամանի, որ ասեն թէ դժոխքն աստ է լեալ։ Քարայրն ուր

digitised by A.R.A.R.@

տուաքեալքն ննջէին : Ծննդագրութեան տեղիքն Քրիստոսի, որ է քարընկէց մի 'ի քաղաքէն : Եւ ել հանդէպ 'ի լեառն Ձիթենեաց . ուր զհողն լցին 'ի վերայ կուսին Հրէայքն : Եւ այլ 'ի վեր ուր Տէրն նստաւ, որ քարն փոս եղեալ է : Եւ ել 'ի Գալիլեա 'ի ժամադիրն Յիսուսի : Եւ տեղին ուր Աստուածածին աղօթեալ է յորժամ հրեշտակապետն զբրաբիոնն ետ . 'ի նոյն տեղին ամենայն ծառքն երկիր պագին Աստուածածնին, և դեռ խոնարհեալ կան ամենայն ծառքն ընդդէմ արեւելից :

Եւ սուրբ Համբարձումն Քրիստոսի : Եւ 'ի ներքոյ նորա գերեզմանն Պիլիգեա պոռնկին, որ է փորձումն : Եւ տեղին ուր Տէրն զՀայր մերն ուսոյց աշակերտաց : Եւ քարն որ նստաւ Տէրն 'ի վերայ, որ է յանդիման տաճարին, և ելաց 'ի վերայ քաղաքին : Եւ տեղին ուր Տէրն նստաւ 'ի վերայ յաւանակին : Եւ զառ 'ի վայր լերինն, ուր ընդ առաջ ելին ծերքն ոստօք և տղայք արմաւենեօք, և ովսաննայիւք օրհնեցին զԱստուած :

Եւ երթ 'ի Բեթբագէ 'ի Բեթանիայ . յարութիւնն Ղազարու . տեղին ուր ընդառաջ ելին Տեառն Մարիամ և Մարթա :

Ի ճանապարհն Յորդանանու կուրացն տեղն որ նստէին : Յերիքով տունն Զակքէոսի : Յորդանանի տեղին ուր մկրտեցաւ Քրիստոս, որ է յայնկոյս լեառն Հերմոն փոքրն : Եւ յայսկոյս Յովհաննու անապատն : Եւ նոյն տեղի է որ զտապանակն անցուցանէին քահանայքն 'ի ժամանակին Յեսուայ որդւոյ Նաւեայ, ուր զերկոտասան վէմն եդին : Եւ նոյն տեղին է որ Յակոբ նահապետն գօտեմարտեցաւ ընդ Աստուծոյ :

Եւ Զօսիմոսի անապատն : Եղիսէի աղբիւրն : փորձութեան լեառն, որ յաղթեաց փորձողին փրկիչն, և տեղին ուր եկաց զքառասուն օրն :

Եւ 'ի դառնալն յԵրուսաղէմ՝ տեղիքն Թզենոյն, զոր Տէրն չորացոյց : Վէմն ուր զսուրբ Նիւրղին զձեռն 'ի վերայ հատին . Նիւրղի գերեզման և մօրն Աննայի : Եւ էջ 'ի կեդրոնի ձորն : Սուրբ Յակոբայ՝ եղբօր Տեառն՝ գերեզման և աշտարակն որ ընկեցին 'ի վայր : Ողորմութեան դուռն որ կաղն բժշկեցաւ 'ի ձեռն Պետրոսի և Յոհաննու : Դուռն տաճարին, որ բացաւ 'ի գալն Տեառն քառասնօրեայ 'ի տաճարն :

Տաճարն Սողոմոնի, կալն Որնայոյ, ձուլածոյ ծովն : Եսայեայ մարգարէին գերեզման : Աւազանն Սելովայ . Յօբայ ջրհորն, և իւր գերեզմանն : Զառներն որ է Հայոց գերեզման : Ոնոփրիոսի անապատն : Հառաչումն Պետրոսի : Հատման ձեռաց տեղին, որ յԱստուածածնին դագաղն մերձեցաւ : Սուրբ Հրեշտակապետն քաղաքն՝ վանքն Հայոց, ուր փրկիչն ետ զհոգին մօրն 'ի ձեռս Միքայելի :

Թումայի առաքելոյ կախելոյ տեղն, որ Տէրն վաճառեաց :

Տրտում Աստուածածինն, որ է յանդիման խաչելութեան :

Եւ եկ 'ի Սիոն. ուստի առ Աստուած ըզհողն և ստեղծ զԱդամ : Սուրբ վերնատունն, ուր Տէրն զոտս աշակերտացն լուաց, և պատարագեցաւ . և ուր Հոգին սուրբ էջ յառաքեալսն : Եւ սուրբ ներքնատունն, ուր դրօքն փակելեօք եմուտ Քրիստոս առ աշակերտսն, և տեղին ուր Թովմաս շօշափեաց զկողն Քրիստոսի : Սիմէոնի ծերունւոյն գերեզմանն : Դաւթի մարգարէին գերեզման : Սուրբ Ստեփաննոսի գերեզմանն : Սուրբ փրկիչն, որ կայ վէմն որ զՏէրն 'ի վերայ ձաղեցին : Տեղի ննջման սուրբ Աստուածածնին : Քարն որ 'ի Սինէական լեռնէն եբեր հրեշտակն Սուրբ Աստուածածնին . Յոհաննու աւետարանչին աղօթանոցն : Աստուածածնին աղօթանոցն :

Եւ ել յամուրացն Սիոնի և գնա 'ի Բեթղահէմ, և 'ի ճանապարհին է սուրբ Կիպրիանոսի վանքն : Ջրհորն ուր զՅովսէփ ընկեցին եղբարքն : Եւ սուրբ Եղիայի անապատն : Մանկանց կոտորածի տեղն Բեթղեհէմ. սուրբ այրն ուր ծնաւ Քրիստոս : Սուրբ մսուրն որ եդաւ : Եւայի գերեզման : Եւ մանկանցն գերեզման :

Եւ ջրհորն որ աստղն երևի : Եւ Մա-

938

digitised by A.R.A.R.@

գաց տեղն որ իջանէ. Եւ հովուացն տեղն. Հաւաքայելի գերեզմանն. Տապանակի խաչն. որ է ըլուրն Ամինադաբայ, ուր եկաց տապանակն քսան ամ։

Փիլիպպոսի աղբիւրն, որ զներքինին մկրտեաց։

Եւ գնա 'ի լեռնակողմ ուր Զաքարիայի տունն էր. ի ծնունդն Յովհաննու Մկրտչի. Ազօթից տեղն Զաքարիայի. Եւ պատառեալ վէմն, որ պահեաց զԵղիսաբեթ և զսուրբ տղան Յովհաննէս աւուրս երեք յորժամ Հերովդէս խնդրէր սպանանել։

Եւ գնա երկոտասան մարգարէ 'ի Թեկուայ, ուր Ամբակում զճաշն տարաւ Դանիելի 'ի Բաբելոն. ի ճակատու տեղին Դաւթի և Գողիաթու, որ պարսաքարեաւն սատակեաց։

Եւ գնա 'ի հայր Աբրահամ, որ է Սիկիմ, ուր կան գերեզմանքն Աբրահամու և Սահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Սառայի, Ռեբեկայ, Լիայ, և այլ նախահարցն. Եւ 'ի ծառն Մամբրէի, որ Աստուած եկն առ Աբրահամ. ի լեռան ուր խօսեցաւ Աբրահամ ընդ Աստուած, որ հայի յերեսս Սոդոմայ. ի Յայենոցն ուր մկրտէր Յովաննէս.

Եւ գնա 'ի Նազարէթ, ուր հրեշտակապետն աւետեաց կուսին։

Ի լեռան՝ ուր գահավէժ արարին ըզՏէրն Հրէայքն. ի կանա Գալիլեացւոց, ուր զջուրն 'ի գինի արար. ի Տիբերական ծովն, ուր զձուկն որսացին. ի Գենեսարէդ, ուր յետ յարութեան երևեցաւ փրկիչն. ի լեռան ուր զհացն աճեցոյց, ուր զհինգ հազարս կերակրեաց. ի Թափօրական լեռան, ուր Քրիստոս պայծառակերպեցաւ։

Ի քաղաքն Նային, ուր Քրիստոս զորդի այրոյն յարոյց 'ի մեռելոց. ի Մամլուս քաղաք, 'ի բանդն Յովհաննու, ուր գլխատեցաւ 'ի Հերովդէէ։

Եւ 'ի գերեզման Յովհաննու. ի ջրհորն Սամարացի կնոջն, և 'ի Տապարիայի ծառն։

Եւ այս սակաւ է 'ի բազմացն զոր գրեցի։

ՍՏՈՅԳ ՑԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՋ ԼՈՒՍԻՆԵԱՆ ԱԶԳԱՏՈՀՄԻՆ

(Տես Հա. Լթ, 231, — Խ. 26, 97)։

Մինչև ցարդ հնացած Լուսինեան տոհմին միակ ճիւղն փերոս Լուսինեանէն յառաջ եկած է, որ 1447ին յեւրոպայ ճանապարհորդութիւն մ'ըրաւ, քրիստոնեայ Տէրութեանց օգնութիւնը խնդրելու կիպրոսի թագաւորութեան համար. Էլէոնորա անուամբ դուստր մ'ունէր, ամուսնացած Տէր Վէլապրուէդ ժիլմնի հետ, և ուստր մ'ալ Հիւկ կոչուած. Այս վերջինքս հօրեղբօր որդիք էին Յակովբ Բ թագաւորին, որ կը թագաւորէր 'ի կիպրոս 1464էն–1473. Հիւկոս՝ Նիկողայոս անուամբ որդի մ'ունէր, որոյ կինն մեռնելով՝ երկու որդի թողուցեր էր, Թովմաս և Զաքարիա անուամբ. այս վերջինս եկեղեցական եղաւ և Ֆամակոստա քաղաքին արքեպիսկոպոս անուանուեցաւ (1550) Մամաքի Ա. անուամբ. Թովմաս և Զաքարիա Լուսինեանց երիտասարդութեան ժամանակ, կիպրոս կղզին առին Թուրքք (1570). Ասկէ յառաջ եկած քրիստոնէից երկիւղին և փախստեան առթիւ, այս երկու եղբարքս իրարմէ բաժնուեցան. Թովմաս անկէ վերջը 'ի Սպանիա կը գտնուի, որդեգրեալ Գարտոնայ ազնուական ընտանեաց. և հօն Փիլիպպոս Դ թագաւորին ծառայութեան մէջ մտաւ, և ինչուան թագաւորական տանը Սենեկապետ ընտրուեցաւ. իսկ Զաքարիա 'ի Քիոս հաստատուեցաւ, քանի որ այս կղզիս Վենետիկեցւոց ձեռքն էր. Առաջինն մեռաւ առանց ժառանգի, և երկրորդն երկու որդի

digitised by A.R.A.R.@